ղեւ, եւ յանձն արար նմա զգործ տէրութեան իւրոյ։ Բայց չվայելեալ նորա ընդ երկար զայն իշխանութիւն մեռաւ ՕՂԷ (1168), կացեալ յայնմ մեծութեան ամիսս 2 և աւուրս 5։

Արարացիք զսա համարին սկիզբն և հեղինակ էյուպեան հարստութեան։ Շիրքու եւ էյուպ էին որդիք Շադէի 'ի Դուին քաղաքէ Հայոց, յազգէ Մարաց. բայց Սալահատտին որդի էյուպայ ծնեալ էր 'ի Թիկրիտ քաղաքի Մարաց. և կային սոքա 'ի ծառայութեան Ամատէտտին զանդի ամիրային և որդւոյ նորին Նուրէտտին Սուլթանին։

Յետ այնորիկ Խալիֆայն Ա'տատ ըստ խնդրոյ զօրավարաց բանակին եւ իշխանացն Եգիպտոսի կացոյց զՍալահատտին Վէզիր և զօրագլուխ 'ի տեղի հօր եղբօր իւրոյ, և անուանեաց զնա Մէլիք Նասր. թէպէտ Նուրէտտին կոչէր զնա Սիմէհսալար (սպարապետ) եւ փոխանորդ իւր։ Սալահատտին կոչեաց և էած առ ինքն զհայր իւր էյուպ և զընտանիս նորա. որպէս Յովսէփ կոչեաց զհայր իւր զՅակոբ, զի լիցի կատարեալ ուրախութիւն իւր, եւ կացոյց զնա 'ի վերայ դանձուց իւրոց, որ և յետոյ անկեալ 'ի ձիրսն մեռաւ, մինչդեռ Սալահատտին դեգերէր 'ի կողմանս Փերեքայ կռուելով ընդ Լատինս։

Եւ 'ի նմին ամի իբրեւ լուաւ Սալահատտին թէ պաշարեցին Լատինք զՏիմիատ քաղաք, ամասպարեալ եհաս 'ի վերայ նոցա իբրեւ զկայծակն բազմութեամբ զօրաց, և պաշարեաց զնոսա արտաքուստ զաւուրս 50։ Ազգ եղեւ Լատինաց թէ ել Նուրէտտին 'ի վերայ ծովեզերեայ քաղաքաց եւ ասպատակաւ աւերեաց զնոսա, վասն որոյ փոյթ կալան դառնալ յետս 'ի պահպանութիւն քաղաքացն։ Իսկ Սալահատտին դիմեալ 'ի վերայ Ասկալոնի եւ Ռէմլէի՝ ասպատակէր 'ի կողմանս յայնոսիկ. պաշարեաց նաեւ զոմանս 'ի ծովեզերեայ քաղաքաց 'ի ծովու և 'ի ցամաքի, այլ չկարացեալ առնել ինչ՝ դարձաւ յԵգիպտոս։

Մեռաւ վերջին Խալիֆայն Ա'տատ Ֆաթիմեան հարըստութեան 'ի թուին Հիճրէթի ՕՂԱ (1170) եւ իսպառ բարձաւ յԵգիպտոսէ իշխանութիւն ցեղին այնորիկ, տեւեալ ամս իբր 269, եւ Սալահատտին տիրեաց թագաւորական պալատին եւ ամենայն դանձուց նորա, եւ զընտանիս